

Եւ որովհետեւ եղանակը գարնանային էր, ծաղկազեղ դաշտերը յորգահոս արիւնով ներկուեցան: Իսկ երբ մարդ նկատէր գետնաթաւալ դիակներու հսկայ կոյտերը՝ սիրտը կը ճիւղէր և աղիքները կը գալարուէին, լսելով մանաւանդ վերաւորներու հեծեծանքներն ու ջարդուածներու մռնչիւնը, խոցուածներու թաւալգոր շարժիլն ու սողալը, երկչոտներու փախուստը, յուսալքուածներու պահուրտիւր, վատերու յուսահատութիւնը, կիներու ճիչը, սիրելիներու ողբը, մերձաւորներու սուգը, բարեկամներու աւաղումը:

**ՔԱՋ ՔԱՋԻ ՀԱՆԴԻՊԱՅ**

Արգարեւ ո՛չ թէ մէկ կողմը յաղթեց և միւս կողմը յաղթուեցաւ, այլ՝ քաջերը քաջերու դէմ ելլելով՝ երկու կողմերն ալ պարտուեցան:

Բայց բանի Հայոց զօրավարը ինկած էր մեծ պատերազմի ընթացքին, այնուհետեւ ալ մէջտեղ գլխաւոր մէկը չկար, որու վրայ յենուելով հաւաքուէին միւս զօրականները: Թէպէտ ողջ մնացողները շատ աւելի էին քան մեռածները, սակայն ցիր ու ցան եղան, ու երթալով երկրին զանազան ամուր կողմերը՝ տիրեցին շատ գաւառներու և բերդերու, զոր ոչ ոք կրնար գրաւել:

**ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԹԻՒԸ**

Ահա՛ անուշները այն քաջ նահատակներուն, որոնք հոն, նոյն տեղը վախճանեցան: Մամիկոնեան տոհմէն քաջն Վարդան՝ 133 զինուորներով, Խորխոռունի տոհմէն կորովի խորեկ՝ 19 զինուորներով, Պալուանի տոհմէն արիւն Արտակ՝ 57 զինուորներով, Գնթունի տոհմէն գարնակալիկ Տաճատ՝ 19 զինուորներով, Դիմաքսեան տոհմէն իւսաստուն Հմայակ՝ 22 զինուորներով, Քաջբերունի տոհմէն հրաշակերտ Ներսէս՝ 7 զինուորներով, Գնունի տոհմէն մանուկե վահան՝ 3 զինուորներով, Ընծային տոհմէն արդարեւ Արսէն՝ 7 զինուոր-

ներով, Սրուանձտեան տոհմէն յառաջադէմ Գարեգիկ՝ 2 հարազատներով և 18 զինուորներով:

Այս 287 նահատակները՝ ինը մեծամեծ նախարարներուն հետ՝ հոն, այնտեղ մարտիրոսացան: Իսկ թագաւորական տունէն և Արծրունի տոհմէն, ինչպէս նաեւ միւս նախարարական տուներէն, բացի այս 287էն, ուրիշ 740 հոգի եւս կայ, որ նոյն օրուան մեծ պատերազմի ընթացքին՝ իրենց անունը գրեցին կեանքի մատեանին մէջ: Ու բոլորը միասին՝ կ'ըլլան 1036 հոգի:

**ՊԱՐՍԻԿ ԲԱՆՍԱԿԻՆ ՋԱՐԴԸ**

Իսկ ուրացողներու կողմէն այն օրը ինկան 3544 մարդ: Անոնցմէ ինը հոգի պատուականազոյններէն էին, որոնց համար շատ վշտացաւ Մուշկան Նիւսաւուրտ: Մանաւանդ երբ նկատեց որ իր բանակը եօթնապատիկ աւելի վնասուած էր քան հայերունը՝ յուսալքուեցաւ, կորսւցուց իր կորովը և չէր կրնար որոշում տալ: Վասնզի պատերազմը իր սպասած ելքը չէր ունեցած: Յատկապէս երբ կը նկատէր ու կը դիտէր իր կողմէն ինկողներու բազմութիւնը, որոնց թիւը՝ Հայոց բանակի կորուստէն բազմապատիկ աւելի կը գտնէր, և գլխաւորաբար այն երեւելի անձերուն կորուստին համար, զոր անուշով մականունով կը ճանչնար թագաւորը՝ սաստիկ տագնապով կը տառապէր: Կը վախնար դէպքերը ճշգրիտ կերպով ներկայացնել և գրել թագաւորին, սակայն ծածկել ալ չէր կրնար, որովհետեւ անկարելի էր այդպիսի մեծ պատերազմի մասին լռել:

**ՎԱՍԱԿԻ ՋԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Եւ մինչ ինք այսպիսի մտատանջութեան մէջ ընկղմած էր ու սաստիկ սրտնեղած, ուրացող Վասակը՝ որ ինքզինքը ազատեր էր փրկերու տակ պահուրտելով սկսաւ միտքարել անոր վհատած սիրտը

և զանազան խորհակալան հնարներ ալ սորվեցնել անոր, թէ ինչպէս կարելի էր խորամանկութեամբ կռուիլ ամրոցներու դէմ: Երդում կ'ընէր թագաւորին անուշով, իր անձին և իր հետ եղող խարբրայ երէցներուն վկայութեամբ: Կը թելադրէր՝ զանոնք պատգամաւոր դրկել և այնպէս ցուցնել՝ իբր թէ ապստամբութիւնը ներուած է և դարձեալ իրաւունք շնորհուած է կեղեցիկներ կանգնելու և բոլոր արարողութիւնները առաջուան պէս կատարելու:

Թէպէտ թագաւորի հրամանը իրաւ ելած էր, - վասնզի անոր զօրութիւնը ջախջախուած էր, քանի որ երկու կողմերն ալ խորտակուած էին. - սակայն հայ բանակը՝ որ յաճախ նկատած էր Վասակի շարութիւնն ու խարէութիւնը՝ չէր կարող իսկոյն հաւատք ընծայել թագաւորի հրամանին:

Աշխարհաբարի վերածեց  
Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

**ԴԱՏԱՍՏԱՆ ՎԱՍԱԿ ՄԱՏՆԻԶԻ**

Ա.

Գունդն արեւու հասած կատարն երկնքի, Շանթ կը թափէր իր կապարձէն թափանցիկ Այրեցաւեր ճամբուն վերայ Ապարի՝ Եռացնելով ալիքն օդին ուռուցիկ: Արեւահար՝ այդ հընոցէն բոցարձակ Անսպաստին մէջ գեոուններ թափառկոտ, Կը փնտռէին մութ ապաստան մ'հողին տակ: Լոկ անհամբոյր սոյլը կ'անցնէր օդէ օդ: Թուփերուն մէջ հաղիւ վայրի ծիծառներ Կ'արձանանան փըշոտ ճիւղի մը ծայրին, Որոնց շուքին ոչ ոք ընկեր առ ընկեր Նստած վայրեց իր մըտերիմ սիրելին: Ոչ մէկ կարկաջ հնչեց այնտեղ անուշիկ, Ոչ մէկ ծաղիկ բացաւ աչքեր կապուտիկ, Ոչ արշալոյսն հոն ժպտեցաւ վարդարեւ: Այլ հեռուէն դեղնած փռչին վերիվայր Լոկ կը յայտնէր կարաւաններ բեռնակիր, Որոնք անջուր ամառութեան մէջ անծայր Խոնջ ճօճումով կը նայէին դէպ' երկիր: Կոճղի մը պէս լայն ծովին մէջ ծրիծրիուն Անոնք անդեկ աստանդական կ'երթային. Ինչպէս մտքին անկերպարան մտածութիւնն Որ ունայն տեղ կը թափառի յամբարիկ: Եւ ինչպէս նոր բուռն խորհուրդ մ'ինքնածին Որ դորացած ամբողջ հոգւոյն կը տիրէ, Փըրփըրերախ՝ դաշտերն անհուն կը սպառէ: Ուժեղին բռնած բաշերն հուժկու նըթոյգին Հեծնողն հաղիւ հեռուն ճամբան կը տեսնէր:

Իր խորհուրդներն ա՛յլ ասպարէզ կը թռչին  
 Դէպի աղօտ լոյսով շողշող աշխարհներ :  
 Փոթորկալից ձին կը կարծէ շղթայուած  
 Այնքան անդուստ ու բուռն է տենչը սրտին .  
 Երբ կէսօրուան սաստիկ տաքէն ըստիպուած՝  
 Դժնեկին տակ կը փնտռէ իր հովանին :  
 Հոն կը քամէ ձիուն բաշերը քրտնած ,  
 Որուն հետ միշտ պայած էր փառք շահելու ,  
 Կամ խառնած էր ճիչն եղնիկին սարսափած  
 Պատերազմի փրօնիչներուն ահարկու :  
 Հաներով իր ճակտի սլքսակն ոսկեղէն՝  
 Մազաւարտով այրած դէմքին հով կու տար .  
 Մերթ կը դիտէր կտրած ճամբան թիկունքէն  
 Եւ մերթ ուղին որ դեռ հեռուն կ'երկընար :  
 Ձեռքը դըրած մարգարտաղարդ գօտիին  
 Մխթը կ'երթար յուղումներէ յուղումներ .  
 Կը սահէին շողն ու ծամեր տօթաղին ,  
 Ինքն ահաւոր հողերու մէջ կ'երազէր :  
 Ո՛հ , ո՛հ , գոչեց , չեմ թողներ , ո՛հ . - անապատն  
 Իսկ սարսեցաւ , - երբ Վասակն է Սիւնեաց Տէր ,  
 Ո՛հ ոք կրնայ արքայ բազմիլ Այրարատ ,  
 Կ'երգնում ես ձեզ երկինք , երկիր , արեւներ :  
 Օ՛ն սըլացի՛ր , տա՛ր փառքէ փառք զիս Սեւակ ,  
 Ինչ որ դժբախտ Արշակունին կորսնցուց ,  
 Պարսիկներէն դայն առնելու մենք երթանք .  
 Օն թրո՛ւր , երբ դեռ իջած չէ խաւարն հոծ :  
 Աչքերը լի նոր եռանդով հրաշաղան  
 Իր ցանկալի թաղէն անդին չէր տեսներ .  
 Ու իր ձեռքին մէջը զսպած երասանն  
 Կը քըշէր ձին , անչէն ճամբան կը սպառէր :

Բ.

Ուսկի՞ց յանկարծ կու դայ այս ձայնն հողեթով  
 Ամայութեան մէջ , երգերու մրմունջով :  
 Արդեօք հրեշտակ մ'ուրիշ հրեշտակ կը կանչէ ,  
 Թէ Մասիսէն դարնան հովիկն հասած է :  
 Ա՛խ , իմ անոյշ հայրենիքիս լեզուն է ,  
 Ձոր հայրերուս խումբն երկնախօս կը հընչէ .  
 Հովիւներուն ձայնն է քակուած փարախին ,  
 Որոնց դառներն յափշտակեց թշնամին ,  
 Բըշած դանոնք հովտէ հովիտ սարսափով  
 Ծածկեց կանաչ խոտերն յօշուած անդամով .  
 Ա՛լ չի լըտուիր բառաչն անմեղ դառներուն ,  
 Ձոր կը կրկնէր երկնի կամարը խօսուն :  
 Փարախներու զինուած պահակ կտրիճներն  
 Աւարայրի ըստուերին տակ են ցըրուեր ,  
 Ու հողիներն ամէն առտու հովին հետ  
 Ճապաղիքին մէջ կը մնջեն տխրաւէտ ,  
 Ու սըփռելով վարդ եղեամին մէջ ցրտին  
 Կը զուարթանան , յուղուած կու լան , կը թռչին . . .

Իսկ հովիւներն անաղորոյն փաղանդէն  
 Կողոպտուած՝ անցուպ , անսրինդ կը քալեն ,  
 Ողջակիցած մարմինն իրենց պաշտելի  
 Գերիներն են այդ վայրին մէջ ամայի .  
 Հաղիւ քանի մ'ոչխարներու հետ ցըրուած՝  
 Կ'երթան լալով , մօրուքներուն հող ցանած .  
 «Ո՛վ մաքրափայլ սիրուն դառներ մեր դաւթին ,  
 Դուք որ սընաք մեր գրկին մէջ ցաւաղին .  
 Ահա կու դանք վըշտով ալ մօտ իրարու՝  
 Մեր այս յետին արցունքն յաղուրդ ձեզ տալու :  
 Համբոյր տալու , համբոյր հողուոյն սիրալիր  
 Երբ չեն կրնար այլեւս հըպիլ մեր սրտերն .  
 Ի՞նչ մընաց մեզ ուրիշ հանդիստ կամ վախճան  
 Եթէ ոչ նոյն մահով մեռնիլ ձեզ նրման» . . .  
 Ո՛վ սրտառուչ ձայն հայրական , մինչեւ հո՞ս  
 Հաննիլ՝ փոխան ասպարէզին պերճախօս .  
 Եւ դէպի ձեզ յառած աչքերն Հայաստան  
 Պիտի մընա՞յ առանց դեղի եւ բուժման .  
 Ա՛հ որ բոցով դուք մեր աշխարհն այրեցիք ,  
 Արդեօք այս հէգ թափառականն շրջմովիկ  
 Պիտի դարձնէ՞ք իր թողլըքած սուրբ հօտին .  
 Եւ Աստուծոյ եւ իր մոռցած աշխարհին :

Գ.

Իսկ նա ետեւ դառնալով այս ձայներէն ,  
 Մինչ կը ծեծէր ձին օդը սուր սմբակով ,  
 Ըզմայլեցաւ անոնց դէմքին լուսեղէն .  
 Հրեշտակներու բանակ կարծեց սպասով :  
 Երա՞զ , ըստո՞յդ , աչքերն իր սառ կը կարին .  
 Գոյնը կ'երթայ , սանձը կ'իյնայ ձեռքերէն .  
 Այլքն ինչպէս՝ որ բախելով քամիին  
 Մերթ կը փշրի , մերթ կը դիզուի ինքն իրմէն :  
 «Մահապարտներ՛ր , կ'ըսէր մտքովն , անպատճառ  
 Աղատութեան ըսպասումով կը բերկրիք .  
 Ի՞նչ պատգամ կայ ձեր գրքին մէջն ինձ համար .  
 Ո՛հ , ի՞նչ պատգամ արդեօք գրուած դուք ունիք :  
 Խեղճը տանջուած , շրթունքը թոյլ , սիրտը թունդ  
 Հաղիւ կրնար թշուառականը կեղծել .  
 Ձէր յիշէր թէ որո՞նք էին իրեն մօտ ,  
 Յընորքներով կ'ուղէր ինքզինքն ըսփոփել :  
 Մերթ կը ցածնար , ու մերթ կ'ուռէր խելայեղ ,  
 Ապա նստած իր անխոնջ ձին սըրավար՝  
 Նըպատակին հասնող նետի պէս անչեղ  
 Դարձեալ ուրախ նոյն ճամբայով կ'ընթանար :  
 Ո՞ւր մոլեգնած , անհոգ կ'երթաս , ո՛վ թըշուառ .  
 Դատաստանն է որ կը սպասէ քեզ Վասա՛կ .  
 Գեղ կը կանչէ Ղեւոնդի շուրթն հըրավառ  
 Կա՛նգ առ այդտեղ , լըսէ՛ վըճիռն արդարակ :  
 Եւ այն ատեն դէմքը ձերուն բոցափառ ,  
 Փըշաքաղուած ձիւնափրփուր մաղերով .

Աչքերուն մէջ շանթ ու փայլակ անհամար  
 Շուրջն աստուածեան հեղապարոյր կամարով,  
 Իբրեւ մահուան ասեղ հրեշտակ անաչառ՝  
 Առաջ գալով կարկանդակ ձեռքն երկնաբեր.  
 Եւ հրապարակ բացած շրթներն ոսկեկար  
 Կը հարցընէր. «Այդ ո՞ւր կ'երթաս, Սիւնեաց Տէր»:  
 Չայնն որոտաց անհունին մէջ «Ո՞ւր կ'երթաս»,  
 Չերդ Աստուծոյ Դրախտի հարցումն Ադամի.  
 Սարսափած իր սիրտն ալ կրկնեց. «Ո՞ւր կ'երթաս»,  
 Խիղճն անհաբեկ կը բռնանար աւելի:  
 Բայց փառամով ողին ցըմահ անդեղջ է.  
 Կ'ուզէ սրտել ցուրտ բերանովն անօրէն,  
 «Ես կը փութամ հայերու թաղն ոսկիէ՝  
 Առնել նրէր քրտինքներուն փոխարէն»:  
 — «Պարսկէ՞ն կ'երթաս, ո՞վ Աստուծոյ դու մատնիչ,  
 Ծերն որոտաց. գընա՛ ուր քեզ կը տանին.  
 Դու որ, սակայն, եղար անդուժ քայքայիչ.  
 Հայրենի տանդ, դիտելով սուզն աւերին,  
 Դուն որ վերջին մարեցիր կայծը Մասեաց  
 Արդ, ի՞նչ աչքով պիտի նայես այդ թաղին.  
 Երբ խուլ եղար այնքան տըխուր արտասուաց,  
 Պիտի լըսե՞ս երգը Գողթան դուստնին:  
 Մոռցար ասոնք, պիտի մոռնա՞ս տակաւին  
 Թէ սեւացաւ երկնքի մէջ զու բախտդ ալ,  
 Այն որ թողիր, թողուց նա քեզ, անէծքին  
 Ժամը հասաւ, դատաւրճիւ եւ ողբալ:  
 Արտասուելի թըշուառական դու վասակ,  
 Չե՞ս տեսներ թէ վերցաւ շնորհքն իսկ քեզմէ.  
 Պիղծ բաղինէն մազերդ են արդ մոխրափակ,  
 Եւ քեզ համար Տրդատի թաղը շանթէ:  
 Չե՞ս տեսներ զու շուրջըդ այդքան բանակներ  
 Որ ուխտական Աւարայրէն թարմադեղ  
 Կ'երթան ուրախ պըսակազարդ դէպի վեր  
 Քեզ նայելով ըսպառնացայտ եւ ասեղ:  
 Աղաղակներն այդ ասագին չե՞ս լըսեր.  
 Յայտքն արիւնին կ'երթայ քաղաք առ քաղաք,  
 Վրէժ երկնքէն, վըրէժ ուխտէն զոր թողիր,  
 Անմեղներու հայրենի վրէժ անողոք.  
 Վըրէժ կ'ուզեն գերդաստաններն ամայի,  
 Կոյսերն համեստ, հարսն ու փեսան եւ այրին.  
 Վրէժ քեզ անհաշտ լեռնականներն ամէհի,  
 Վրէժ կը պոռան, խոպան դաշտերն հայրենի:  
 Ո՞վ չարաղէտ, սարսափելի տեսարան,  
 Տունն Աստուծոյ յաւերժապէս աւերակ.  
 Գետին նետուած, մոզերու ձեռքն ամէն բան,  
 Եւ Գըրիգորն անաշխարհիկ, անդաւակ  
 Չըխնդրե՞ն դեռ քեզմէ վըրէժ, հէ՛դ վասակ.  
 Գրնա հիմա, բայց թէ դառնաս դուն երբեք,  
 Թէ ողջ թողուն գըլուխդ՝ թագի փոխանակ,  
 Թող Տէր Աստուած խօսած չըլլայ ինձ երբեք»:

Մըրըրկահար՝ անդուսպ դերդ ծովն ալեկոծ,  
 Երէցն հիմա ետ կը դառնար փոթորկուն,  
 Շանթն աչքերէն՝ կը թօթափէր հուր ու բոց,  
 Հիպարհոն լոկ կը տիրէր լրտութիւն:  
 Իսկ Մահապարտն յարդի նրման խոզացկուն  
 Երկվարին նստած էր նիւնն անշըշունջ.  
 Վար կախուած էր հրեշտակի թաթն այդ պահուն՝  
 Գըրել վըճիւն անոր սրտին սեւ ու մունջ:  
 Ունայն տեղ իր հողին թնդաց խորերէն՝  
 Դէպի Բարձրեալն երկարեց ձեռքն իր ժըպիրհ,  
 Եւ յուսահատ քըշելով սեւն ամպեղէն  
 Անհետացաւ մըթութեան մէջ լայնածիր:

Գ.

Ո՛չ, ամբարիշտ, աչքն Աստուծոյ չի՛ քնանար.  
 Հազար տարի արդարութիւն թէ լըռէ՛  
 Վըճիւնն անդարձ, որ կը լուծէ անպատճառ  
 Բախտն ամէնուն, չուշանար լոյս տեսնելէ:  
 Մի՛ յոխորտաք յաջողութեան օրերուն  
 Չեր կեանքն ուրախ, որոզայթ է, օձ անյայտ.  
 Մտքի ցընորք եւ պատըրուակ անկայուն,  
 Չի պակսիր շիւղ մ'անոր կըռէն ուղղադատ:  
 Բիւր սահմաններ կտրող անիւն ալ յաճախ  
 Իր հանդրուանն հաղիւ հասած կը փշրի.  
 Դաշտը ծաղկոտ՝ կընայ բանալ վիճ խարդախ  
 Եւ կը ցնդի յոյսը մարդուն դերդ շոգի:  
 Չյաջողեցան նենդաւորներն յաւիտեան,  
 Ոչ դաւն անխախ՝ վայելք տըւաւ դաւողին,  
 Չեղաւ երբեք երկինքը խուլ գրկուածին,  
 Չըմպեց դետինն արինն, արցունք անմեղին...  
 Դուն ի՞նչ յոյսով կը պարծենաս, հէ՛դ վասակ,  
 Դուն ո՞ր մարդէն կամ վաստակիդ փոխանակ,  
 Երախտիքիդ կամ վաստակիդ փոխանակ,  
 Դու որ մատնիչ եւ ատելի ըրիր քեզ:  
 Յո՞ր վասակին. ո՞հ մեռաւ յոյսը սրտին.  
 Տիրեց մտքին ունայնութիւնն ասարկու.  
 Եւ ցանկալի՝ արքունական կոչումին  
 Կը զարդարուէր անդարձ ըսպանդ երթալու:  
 Առաւ սամոյրն աղուաներէն՝ սեւաթոյր,  
 Կախեց վըզէն քայտամանեակն արփային,  
 Մէջքը կապեց մարդրիտ կամարն ոսկեթոյր,  
 Վարազադրոջմը մատին, դինդն ականջին:  
 Վերջին անգամ դողդոջ փայլով կը պճնի  
 Չերդ արփին որ կ'իջնէ սեւ ծոցը մօրկան.  
 Այդ խուսափուկ ու յետին ցոլքն էր փառքի.  
 Իշխաններուն վեճ իշխանին Միսական:  
 Աստուածներով թըշուառն իշխել կը կարծէր  
 Մինչդեռ անպէտ՝ հորթի մը պէս թագազարդ  
 Դէպի մահուան բաղինը սեւ կը մատչէր.  
 Ո՛հ, ի՞նչ խուսող, եւ ի՞նչ կեղծ է բախտըդ, մարդ:

Իսկ երբ Արեաց եւ Անարեաց բռնաւորն  
 Յազկերտ ելաւ դահին վըրայ վերամբարձ,  
 Շուրջը շարեց նախարարներ բիւրաւոր,  
 Ատեան կազմեց՝ յոյսը վախին հետ խառնած,  
 Բագմեցաւ իր խախուտ դահին եւ վասակ.  
 Բոլոր աչքերն անոր փառքէն շըլացան.  
 Այլ տեսիլքէն եւ իր խղճէն սեւորակ՝  
 Զարուանքով լի եւ ցասումով հեռացան:  
 Հրաման ելաւ դատաստանի, ժամն հասաւ,  
 Մեղաւորին հետ անմեղն ալ կը դողար.  
 Կարանաւոր բազմութիւնն հայ կանչուեցաւ,  
 Սուրբ երէցներն առաջ անցան յամբարար:  
 Հոն էր հայկեան վըսեմակերպ դերութիւնն.  
 Հոն վեհադանց կանգուն՝ սերունդն հողեխինդ.  
 Հոն նամակներ, կընիք, թղթեր, փաստ խօսուեն...  
 Հոն կը տիրէր հուսկ լըռութիւն թանձրախիտ:  
 Եւ հոն... ի՛նչպէս ըսեմ... թշուա՛ռ տեսարան,  
 Հոն սեւաւքօղ վարադոյրէն կ'երեւի  
 Խոյրը վերջին Արտաշէսի՝ փոշեման,  
 Մինչ կ'արտասուէ աջնտեղ Ուրին հայրենի:  
 Վասակն ազահ միայն հըրպարտ կը տենչար  
 Լափիւղելու խողի մը պէս անարժան...  
 Բայց սոսկալի բոցալեղու կը մեծնար  
 Յանկարձ թաղին մէջէն մերկ սուրն հայկական:  
 «Այ մինչեւ ե՞րբ արքաներու արքային  
 Պիտի դոշեն ձեր բողոքներն, ո՛վ հայեր.  
 Հոս ձեզ ատեան, թող վճուէ սուրն Արտաշէրին.  
 Ո՞վ դատախազ եւ կամ պաշտպան է եկեր:  
 Առաջ եկուր Կամսարական եւ խօսք ա՛ռ,  
 Բեր քու փաստերդ, ո՛վ դու Սիւնեաց իշխեցող»:  
 Ելաւ Կամսար եւ Հայաստան միատարր  
 Խրախոյս տըւաւ, բոլորուեցաւ կող առ կող:  
 Ղեկնոյ արդէն անդարձ վճուով կը լըռէր.  
 Խօսեցան սուրբ շրթներն օծուած Սահակի.  
 Ատեանն ամբողջ Արշաւիրին հաւան էր.  
 Դրօշակ պարզեց արդարութիւնն անյեղլի,  
 Բոլոր հողուով դողաց Սիւնին. կը տեսնէր  
 Շուրջն ամայի, բեւեկնի պէս թողլըքուած  
 Իր դանակոճ գըլուխն ուժգին կ'օրօրէր  
 Ու չըզըտաւ պաշտպան անձին անարգուած:  
 Ամբըլեցան շուրջն երկնքէն հրեշտակներ,  
 Աստուած կըշիտն իր ահարկու ձեռքն առաւ.  
 Եղեռներու կողմն էր թաղին հետ սուսերն,  
 Ժանդ առաւ սուրն ու թաթն իսկոյն ծըռեցաւ:  
 Սըրտակեղէք նայուածքներով դժոխմբեր  
 Հուր կը թափէր, վասել ատեանը կ'ուղէր...  
 «Առաջ եկէք, ո՛վ վասակիս պաշտպաններ».  
 Անպատասխան մընաց ողորմ հըրաւէրն:  
 Լսեց ատեանն վճիտն արդար սրտերուն.  
 Չունի երբեք ազգատեացն իր բարեխօս.

Այդ նոր Յուդան, վասակն եղաւ յանցաւորն,  
 Սրբեց Մասիս անպարտ արիւնն յորդահոս:  
 Յնդեցաւ յոյսն, ու մութ պատեց եւ աշխարհ,  
 Կը գալարուէր իբրեւ վիշապ դիւխիւոր.  
 «Ո՛հ, մի՛, մի՛ զիս ձեռքէք այդպէս դձձարար,  
 Գիտցէ՛ք, Արեաց արքան է ինձ դատաւոր:  
 Կ'երդնում հուրին, կ'երդնում ջուրին, արեւին,  
 Մի՛ անողորմ այդպէս ըլլաք սատրպաներ,  
 Ես ալ ունիմ վաստակ, քրտինք բազմադին.  
 Ինչո՞ւ մոռնալ, ո՞ւր էք, ո՛վ իմ վըկաներ:  
 Բա՛ւ է, լըռէ՛ մատնիչ Հայոց եւ Արեաց  
 Թագաւորն է դատապարտող քեզ ինքնին.  
 Վա՛ր իջիւր, վա՛ր, հանէ՛ վարդերդ անիծուած,  
 Ա՛յս է փոխան անմեղ արեան քեզ բաժին:  
 Մէկ վայրկեանէն անարդուեցաւ եղիւլին,  
 Մէկ վայրկեանէն փշրեցին իր բարձրութիւնն.  
 Բան չէր տեսներ՝ եթէ ոչ սուր երկսայրին,  
 Եւ ատեանէն մերժըեցաւ իբրեւ շուն:  
 Բացաւ աչքերն... հեծած կարծեց իր սեւ ձին,  
 Բացաւ դարձեալ... մատակ մը կար իր ներքեւ  
 Ինչպէս հովէն ձեծուած սաղարթը ծառին՝  
 Առջեւն ինչաւ իր թշնամի ամբոխին:  
 «Ո՞ւր է, գոշեց, իմ խաւար բանտս, ո՞ւր է մահ.  
 Եկէ՛ք անտէր վասակիս մօտ, եկէ՛ք դուք,  
 Ի՞նչպէս ապրիլ եւ հանդուրժել, վա՛յ, ինձ վա՛յ...»:  
 Այլ չըտեւեց թշուառին շունչը մըղձուկ:

Ե.

Ծանր ու դանդաղ կը թանձրանար խօլ խաւարն  
 Զերդ սեւաթոյր ողիներու բընավայր  
 Ահեղ զնդան մ'անմահներուն, մարդերուն  
 Ու դըրացի անդեղային հրէշներուն.  
 Կը խըռովէր լոկ այդ շիրմի լըռութիւնն  
 Սարտաղբեցիկ ոսկորներու սօսաւիւնն,  
 Որոնք որմին շրթաներով մահարոյր  
 Պնդուած էին այդ ցուրտ մութին մէջ անլուր,  
 Պարկն յարգալից մարմիններուն զրուելի  
 Կը տատանէր կախուած ծայրէն չըւանի...  
 Այդ թաց ու մութ Անյուշ բերդին մէկ անկիւնն  
 Վասակը կար եւ որդերու բազմութիւնն.  
 Ո՛հ, չէր վասակն, այլ կոյտ մը ջիղ եւ ոսկոր,  
 Որոնց անէճքը կեանք կու տար նորանոր.  
 Չունէր մարդու տեսիլ իր անձը նիհար:  
 Զունէր շունչն հոտած, եւ կէս լեղու որդնահար:  
 Բայց շունչն հոտած, եւ կէս լեղու որդնահար,  
 Դուրսը բանտին տաղտուկ պահակ մէկը նստած,  
 Որ անէճքով հաղիւ կու տար պատառ մ'հաց  
 Եւ անդադար կ'ըսէր անոր երեսին.  
 «Ո՛վ վատ վասակ, ե՞րբ վերջ պիտ' տաս քո կեանքին,  
 Ե՞րբ քու տեսքէն պիտ' ազատիմ յաւիտեանն,  
 Ե՞րբ պիտ' թաղուիս որդերուդ մէջ դարձութիւնն»:

